Քամի յանա,
Քամի յանա, յարրս,
Պլանդ կատարում ես,
Կոլեկտիվը շաա լավ բան ա, յարըս։

## 240. ՎԱՐԴ ԵՄ ՔԱՂԵԼ

Վարդ եմ քաղել,
Փունջ եմ կապել,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Փունջ եմ կապել,
Քեզի համր նվեր ճամփել,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Նվեր ճամփել։
Շիր կանալի քշքշալը
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Քշքշալը,
Արի, տնից էրթանք կալը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն
էրթանք կալը։
Արեի հետ ելնենք սարը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Ելնենք սարը,
Ինչ սիրուն ա
Մեր աշխարհը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջան,
Մեր աշխարհը։
Ինչ ես էդքան մնում տանը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Մնում տանը,
Իմ արևն ես ու իմ ջանը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Ու իմ ջանը։

## 241. ՆԻՆԸՄ, ՆԻՆԸՄ

Նինըմ, նինըմ, տոնում ա,
Հո՜յ աման,
Ջաղսի դոնից դառնում ա,
Չէ յաման։
Կոմսոմոլի առնում ա,
Հո՜յ աման,
Մերը խոըթ ա, խառնում ա,
Չէ յաման։
Քանի կանչեմ զայդեն ա,
Հո՜յ աման,
Կոլոա ալի սավդեն ա,
Չէ յաման։
Յարիս խոսքը պահել եմ,
Հո՜յ աման,
Փոխանցիկը ջահել եմ,
Չէ յաման։
Յարիս խոսքով արեցի,
Հո՜յ աման,
Պլանս կաաարեցի
Չէ յաման։
Պաղ ախպուը ա, զուլալ ա,
Հո՜յ աման,
Ջաղս էրթալս հալալ ա,
Չէ յաման։
Նինըմ, նինըմ նաղան ա,
Հո՜յ աման,
Յարս կուսակցական ա,
Չէ յաման։
Նինըմ, նինըմ յան դալու,
Հո՜յ աման,
էրթանք սարը ման դալու,
Չէ յաման։

## ԽԱՂԻԿՆԵՐ

1. Առվի ջուրը հոտել ա,
Եզնիքը նսաոտել ա,
Մերդ խորթ ա, այ ազա,
Ճորերդ կեղաոաել ա։

2. Սարի գլխի ղուշ էլա,
Եթիմ տղի թուշ էլա,
Յարիս մայրիկը խորթ ա,
Խորթի աչքին փուշ էլա։

3. Ջաղացի դուռը ցախ ա,
Կաուրը լիքը դոխ ա։
Ախպորս զալուն մատաղ,
Գոակումը լիքը վարդ ա։

*

4. Յարիս երդիկը ծուխ ա,
Խուճուճ մազերը թուխ ա,
Աչքեր ունի՝ ջուխա ճրադ,
Սրիտ ա էրում անկրակ։

*

5. Բարձն ու խալին փռած ա,
Յարս վրեն քնած ա,
Աչքին, ունքին հավան եմ,
Համա ռանգը թռած ա։

6. Ա՜յ հույն տղա, հույն աղա,
Ախպրի գլխին քուն աղա,
Ծաղիկս ջուրն եմ գցել,
Գնա բռնի, դուն աղա։

7. Ջրրի կածանը լեն ա,
Իմ սիրած տղեն էն ա,
Ինքը հազար հնարքով,
Տուն ու տեղով՝ շնորքով։

8. Քանի գինին թասին ա,
Կանչենք խաղը «Հասին ա»...
—Տղերք ջան, լավ քեֆ կանենք,
Հարսանիքս պասին ա։

9. Այ ասին, «Հասին» ա,
Կարմիր գինին թասին ա,
Կարմիր գինին թափեցինք,
Թաղա փեսին խափեցինք։

10. Աղբրի ջուրը սառն ա,
Սար գնացողն իմ յարն ա,
Ցարխս յանարին ղուրբան,
Մեջքի քամարին ղուրբան։

11. Կաթից համովը սերն ա,
Կաթ կթողը իմ մերն ա,
Էն դառնարած շեկ աղեն,
Աշխարք գիտի՝ իմ աերն ա։

12. Հարսնիք, հարսնիք համաշա,
Էլա կտուր թամաշա,
Կարմիր սոլեր էս հագել,
Համա դեյրեդ հնմաշ ա։

13. Սարերի հովն անուշ ա,
Իմ յարը թութի ղուշ ա,
Հրես էկավ րեռներով,
Բերածը ղանդ ու նուշ ա։

14. Սռի քամակը շուշա,
Իմ յարը թառլան ղուշ ա,
Բարձը թախտին դրած ա,
Ցարս վրեն կռնած ա։

15. Աղջի, անումդ ի՞նչ ա,
Սիրուն ես՝ խելքդ քիչ ա,
Հեաս խոսա մի բերան,
Իմանամ միտքդ ի՞նչ ա։

16. Մեր բաղի ճամփեն էս ա,
Ցարխս ճամփումը տեսա,
Ասի՝ քեզնից կարոտով՝
Իմ օրն ու հալը կես ա։

17. Աշխարքի կարգը էս ա,
Դու հարս պահս, ես՝ փեսա,
Օխտը պորտը հարցրին,
Ասին՝ ձերը չհաս ա։

18. Կարմիր գինին շամով ա,
Սիրած յարը համով ա,
Ջահել աղա, աղիղ օր,
Քեֆս սաղով, դամով ա։

19. Շվին կածի՝ ձեն կաա,
Ձենը դեղով մին կտո,
Ախպորս դալուն մաաաղ,
Թառլան ձին տակին կգա։

20. Սալի դոշը ալոա ա,
Ցալս նախշուն, խորոա ա
Խորոաութjունն իր աեղին,
Բոյիցը շատ կոլոա ա։

21. Աղջի, սիրտդ լաց արա,
Դուս դալուց իմաց արա,
Նանիս աված մաղերով,
Ջոր բողաղդ թաց արա։

22. Փոցխն առա սարա կալը,
Հագել ես խաս ու ալը
Քեզնից բեղամաղ էլած,
Աչքով տեսա՞ր իմ հալը։

23. Ամա՜ն տալան, իմ յարը,
Տալան իմ մեկուճարը,
Ասաված սիրեք մոա եկեք,
Էս ո՞նց կըլնի իմ ճարը։

24. Ասեմ՝ ով ա իմ յարը,
Խոսեմ՝ ով ա իմ յարը,

Գիր-ղալամով, հունարով,
Ուսումով ա իմ յարը։

25. Սիրուն աղջկա աերը,
Ջավեց քաֆուր հերը,
Թե աղջկա սրտովն ա,
Ինչ ունեն հերն ու մերը։

26. Թոն ա գալի վիրիցը,
Ես վառվա քու սերիցը,
Քեզնով ես հայիլ-մայիլ,
Ընկա գեղի վրիցը։

27. Արագի խոր ագեքը,
Կողպա աոլաղ գյագեքը,
Թողել են լավ խաղերը,
Բոնել են հին ղայգեքը։

28. Ջեռներդ ծափ ես տալի,
Շորերդ թափ ես տալի,
Շեկ մազերդ շաղ էկած,
Ծովի պես լափ ես տալի։

29. Մի յար ունեմ նաղանի,
Մաըղու խելքը կտանի,
Սև ու կամար ունքերը,
Սեր ու գուման կհանի։

30. Սիրուն աղջիկ մի թոնի,
Խնձոր գցեմ դու բռնի,
Ինձ չհավնես՝ կանիծեմ,
Քամին թևերդ տանի։

31. Սար կա՝ սարի նման չի,
Յար կա՝ յարի նման չի,
Ջուր աեղ ճամփա մի պահի,
Քու մերն ինձի հավան չի։

32. Սարերի տուղտը պահ,
Ջորերի թուխպը պահ,
Իմ յարի ծնկան ծերի,
Ղալամն ու թուխտը պահ։

33. Սարերի սալմա պահ,
Բաղերի քալամ պահ,
Իմ ազիզ յարի ձեռին,
Դավթար ու ղալամ դտի։

34. Բահն տաս՝ առուն գացի,
Հացի գախին նստա հացի,
Կշաես անցար, բարով չես տա,
Քո բարևիդ կարոտ մացի։

35. Վերի հանդում բանեցի,
Հանդս ցորեն ցանեցի,
Ազիզ յարը միտս ընկավ,
Ծանդր հոգոց հանեցի։

36. Թուղթ ու ղալամ ճարեցի,
Յարիս մի գիր գրեցի,
Էս իմ գրած թղթումը
Սիրտս միջին գրեցի։

37. Աղջի, հեյրան ես դառել
Սարի ջեյրան ես ղառել,
Որ ինձ տոնես՝ իմացի,
Դարդիս ղարման ես դառել։

38. Շուլալս ծուռն եմ ավել,
Լվացքս գուռն եմ փռել,
Իմ աղիզ ախպոր խաթրին,
Որձ գառը փուռն եմ ավել։

39. Սարին կրակ եմ արել,
Ջաղրին ճրագ եմ արել,
Յարիս փայ ու բաժինը,
Սեր ու կարագ եմ արել։

40. Ոչխարը սար եմ արել,
Գութանով վար եմ արել,
Սարի հոտաղ էն տղին,
Մաքումս յար եմ արել։

41. Սուրբ Սարգիսն ուխտ եմ արել,
Մազերս ջուխտ եմ արել,
Որ ինձ իմ սիրածին տան՝
Գրրացին թուխտ եմ արել։

42. Աղրրիցը ջուր եմ տարել,
Բաղիցը նուռ եմ տարել,

Տեսա՝ յարս ընդի չէր՝
Ասացի՝ ղուր եմ տարել։

43. Գդակդ ծուռն ես դրել,
Աչքդ մեր դուռն ես դրել,
Լոթի-փոթի շախով ես,
Ափսոս՝ սխտոր ծախող ես։

44. Գնա, գնալուդ մատաղ։
Քու բարե տալուդ մատաղ,
Ուսովդ մտիկ չտաս,
Լիք բոխչով գալուտ մատաղ։

45. Ատրի խոաը ծեղվեծեղ,
Ախպեր, էրթանք միատեղ
Թե հարամին վրա աա՝
Գլուխս աամ դլխիդ տեղ։

46. Ծոցումդ գիր ու ղալամ,
Խաղովդ Աշուղ-Քարամ,
Ուխա եմ արել, որ առնեմ,
Գիտենա՝ աշխարք-աղամ։

47. Ծամս սանդրեմ, նոր խաղամ,
Էրկանք դնեմ ու աղամ,
Հենց ոը յարս անց կենա
Աղունս կիսաա թողամ։

48. Կառր-կառը վարել եմ,
Սիրուն աղջիկ ճարել եմ,
Տեսա անուշ քնած ա,
Վարղն էրեսին փռած ա։

49. Սանդ կծեծեմ՝ հախ կանեմ,
Մաշիկը ոախս լալխ կանեմ
Նատ որ խոսես, շան աղա,
Մուկն ըոխիցդ կախ կանեմ։

50. Անուշ խաղիդ ա՛խ կանեմ,
Սերս վրեդ հախ կանեմ,
Թե որ ինձ չմոռանաս,
Ուխտս ա՝ մատաղ կանեմ։

51. Աղջի կայնի, բան ասեմ,
Ծամերդ երկան ասեմ,
Թե որ ինձի կհավնես՝
Քեզի ջան, ղուրբան ասեմ։

52. Էս ա՝ գալիս ա տարին,
Որ չեմ տեսել իմ յարին,
Ընչանք տարին բոլորի,
Իմ սիրտն էլ կմոլորի։

53. Սարում ունեմ պուճուր տուն,
Միջին ունեմ էրկու սուն,
Սուն ու գերան վար պաեր,
Արաով սիրած յար պտեր։

54. Պուճուր աղջիկ, ղալում ես,
Մաղերդ սղալում ես,
Խունջիկ-մունջիկ անելով,
Արտիս եղը հալում ես։

55. Ուր գնաս, ոըաեղ մանես,
Թե քաղաք, թե գեղ մանես,
Ալամ-աշխարք պտիտ գաս,
Իմ նմանը չգտնես։

56. Վիճակ, վիճակ օլորես,
Աչքի վիճակ հլորես,
Վիճակն ո՞ւմն ա, հարցրեք,
Մուրաղ—վիճակ օլորես։

57. Էրեանուց կասի յարս,
Անունը Աղասի յարս
Շաքի, Շիվան ու Շամախի
Հնդասաանուց—կասի յարս։

58. Հրես վարդը դրկումս,
Աղիղ յարս մաքումս,
Զընի՞, յարս խռովավ՝
Վարղն էլ դռակիս թոռոմավ։

59. Սարվորը սարով էկավ,
Իմ յարը բարով էկավ,
Խուրջինը ուսով դցած,
Բողչով, նուբարով էկավ։

60. Արար, վարար, ջաարարար,
Քանց Բաքվա ջուրը վարար,

Բաքու գնացող տղա,
Ուշ ու միտքս ո՞ւր տարար։

61. Ինչ որ արիր դու արիր,
Դու ինձի ղարղլու արիր,
Ինձ թողած՝ ուրիշն առար,
Էդ բանն իմ ջգրու արիր։

62. Բարակ տու՛ ղուլալ ջուր,
Էրկու դեդ ա՝ մի աղբյուր,
Անունս հեչ տալիս չես,
Սիրել ես՝ ջուղարը տուր։

63. Հերիք էլնես մեր կտուր,
Ընձի արիր սրակտուր,
Թե չես հավնի՝ չէ ըսա,
Թե կհավնիս՝ խոսք մի տուր։

64. Քամին էկավ հով մնաց,
Անձրեն էկավ՝ ծով մնաց,
Յարս թթու խոսք ասեց,
Իմ սիրտը խոով մնաց։

65. Ես ու յարս ջահել ենք,
Ուխտ ու պայման արել ենք,
Սիրել ենք սեր ու սավդով,
Ալամ-աշխարքի ղայդով։

## ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ագահի աչքը մենակ հողը կկշտացնի։
Ագռավի խնամին կաչաղակը կըլնի։
Ագռավը վրեն քուչուչ անի՝ մի դանղուկ միս չի դանի։
Ագռավի ղոալով վարդիվորին ձին կդնի։
Ագռավի ճուան էլ իր մոր համար քաղցր ա։
Ագռավի ճուար չի թողա, մոր ըերանը բան հասնի։
Ագռավի աեսած սերմը չի կանաչի։
Ագռավին ասին՝ ղշերի միջին որն ա սիրուն, ասեց՝ իմ ճուտը։
Ագռավին թագ տվին, որ ամենասիրուն ղշի գլխին ղնի, տարտվ իր ճուտի գլխին դրեց։
Աղտպ աղի աչքին փարդա կա։
Աղապն ու քոռը մին ա։
Աղաավեցինք, ջհանդամ թե աղջիկ էր։
Ազիզ թիքեն մեյդան կհանի։
Ախ կանես՝ ջահելությունը ձեռղ չի ընկնի։
Ախմախին ձի փեշքաշ արին, ասեց՝ թամքել տվեք։
Ախմախ գլխի ձեռիցը խեղճ ոտերը դաթար չունեն։
Ախպերը որ ախպորն ուզեր, աստծուն էլ ախպեր կըլներ։
Ախքատությունը աշխատավորի դռնիցը մտիկ ա աըել, սիրտ չի արել մտնի։
Ախքատի ձեռին մի կտոր հաց են տեսել։
Ախքաաի կով ըլներ, հմի ցամաքել էր։
Ախքաաին մի ուլ, էն էլ անկաճը խուլ։
Ախքաաին էրեխա ջաա կլնի, հարուստին՝ մալ ու դովլաթ։
Ածան հավը կչկչան կըլնի։
Ակաս-մակաս, էդ էը պակաս։
Ակլաաիղ՝ չվանի վիղ, կախվի երթիս։
Ահը վեր ա, քանց մահը։
Ահի տարին ինչ էր, որ մահի տաըին ինչ ըլներ։
Աղեղը ոը ջաա լարես, պտի կաըես։
Աղեն ասում ա՝ քշի ձորը, քշի ձորը։
Աղեքի մալն ա էթում, նոքարների ջանն ա էթում։
Աղն ա կերել մաաաղը։
Աղջիկը բիլակին կտան, ոչ թե բիլաղըկին։
Աղջիկը, որ կա՝ ալնի թիքա է։
Աղջիկը, որ կա՝ էլ տոի ա, դուշման քոռի ա։
Աղջիկը մեծանա՝ բախան էլ հեաը կմեծանա։
Աղջիկ-աղջիկ, քարե չղչիկ, ալուր մաղեմ դամ քեղ պահեմ։
Աղջկանը ժառանգ են ասել, ոը մոր սիըտը չճաքի։
Աղջիկ եմ, ղոշամ եմ՝ նաշաղ եմ։
Աղջիկ ուղես՝ մերը տես, կառր ուղես՝ ծերը տես։
Աղջիկը ղնացական ա, տղեն մնացական ա։
Աղջիկը դարի ա, տղեն՝ ցորեն։
Աղջիկը որ կա՝ էլի կարմունջ ա։
Աղջիկը որ կա՝ էլօղլու ճրաք ա։
Աղջիկը որ կա անկդրիլ ձմերուկ ա։
Աղջիկը ոսկի օրորոցով իր հոր տանը չմնա։
Աղջիկը հոր տանը ջուը ա, տղեն ավաղ ա։
Աղջիկը օըեկան, բաժինքը՝ տարեկան։
Աղջիկը մաաին կտան, ոչ թե մաաանիքին։
Աղջիկն ասեց՝ լվացքի պես բախտս ըլներ։